

Աւելորդ եմ համարում նկարագրել ապրա-
տամբութեան մանրամասնութիւնները, ինչ-
պէս նաեւ այն անօրինակ խանդավառութիւնը,
որ տիրեց բուլղեիկեան իշխանութեան ան-
կումից յետոյ: Դա մի եզակի, աննկարագրե-
լի, արբեցնող վայրկեան էր, որ կարելի էր
գգալ, ապրել, բայց բնաւ նկարագրել: Մա-
նաւանդ յուզիչ էր ու ցնցող այն վայրկեանը,
երբ ժողովրդական ցասումի տակ խորտակ-

ուեցին բուլղեիկեան արիւնոտ բանտի ու «չե-
կա»-յի դռները եւ հազարաւոր բանտարկեալ-
ներ ազատ գուրս եկան եռագոյն դրօշակներով
պճնուած փողոցը, ուր նրանց ողջունեց «Մեր
Հայրենիք»ը... Աւա՛ղ, նրանց մէջ չկային
Համագաստը, Բանուոր Սերգօն, հերոս զնդ-
Ղորդանեանը եւ ուրիշները, որոնք քիչ առաջ
մահացել էին բուլղեիկեան կացիներէրի տակ:
(Շարունակելի)

Հայ Քաղաքական Մտքի Դեգերումները

Գրեց՝ Ռ. ԴԱՐՔԻՆԵԱՆ

VIII

ԳԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԵՍԱԿԵՏՈՎ



ԱՏՄԱԿԱՆ ներկայ ժամանակաշը-
ջանին մէջ «Համաշխարհային յե-
ղափոխութիւնը» արդարեւ պարզ
ցնորք մըն է:

Աշխարհը այսօր բնաւ բաժնուած է եր-
կու հակամարտ բանակներու, որոնցմէ մէկը
իրբ թէ կը ներկայացնեն բոլոր երկիրներու
բանուորները, իսկ միւսը՝ բոլոր երկիրներու
բուրժուաները: Վերացական գաղափարներէ
քողաղերծուած՝ իրականութիւնը երեւան կը
բերէ բոլորովին տարբեր պատկեր մը:

Երկրագնդի երեսին սփռուած պետու-
թիւններն ու ազգերը կը դանուին ազազակօրէն
տարբեր տնտեսական, ընկերային, մշակութա-
յին եւ քաղաքական մակարդակներու վրայ,
ունին տարբեր շահեր եւ շեն կրնար միջազգա-
յին միութիւն կազմել նոյնիսկ դասակարգա-
յին տեսակէտով: Այլեւայլ երկիրներ ու ազգեր
որոշ ժամանակի մը համար կրնան ունենալ
շահերու ներդաշնակութիւն եւ վիճակներու
նմանութիւն: Տարբեր երկիրներու բանուորա-
կան կամ բուրժուական դասերը կրնան երբեմն
ունենալ ընդհանուր թշնամիներ եւ ընդհանուր
նպատակներ: Բայց բացարձակ սխալ է երե-
ւակայել, թէ Անգլիոյ բանուորը ունի նոյն շա-
հերը, ինչ որ Հնդկաստանի կամ Եգիպտոսի:
Միամտութիւն է կարծել, թէ Ֆրանսայի բան-
ուորը Ալժերի կամ Մարօկոյի եւ կամ Չի-
նաստանի բանուորներու հետ կապուած է ա-
ւելի սերտ ու կենսական կապերով, քան իր
ազգակից Ֆրանսական բուրժուազիայի հետ:

Կատարեալ երեխայամտութիւն է ենթադրել,
թէ անգլիական բանուորը իր բուրժուայէն
նուազ շահագրգռուած է անգլիական գաղութ-
ներու պահպանումով եւ գաղութային յետա-
մնաց ու տկար ժողովուրդներու շահագործու-
թեամբ:

Ճիշդ է, ամէն երկրի եւ ազգի ծոցին մէջ
տեղի ունի դասակարգային պայքար, որ եր-
բեմն նոյնիսկ արիւնահեղ բնոյթ կը ստանայ:
Սակայն այդ իրողութենէն հետեւցնել, թէ բո-
լոր երկիրներու մէջ կատարուող դասակարգա-
յին պայքարները կարելի է մէկ յայտարարի
րեւել եւ ամբողջ աշխարհը կարելի է միայն
երկու բանակներու վերածել, կը նշանակէ ոչ
միայն տրամաբանական գոհճիկ սխալ գործել,
այլեւ շարաշար կերպով մեղանշել իրականու-
թեան դէմ:

Դասակարգային պայքարի այս վերացա-
կան եւ ցնորական հասկացողութիւնը յատուկ
է ոչ միայն կոմունիստներուն, այլեւ տակա-
ւին ընկերվարականներու մեծագոյն մասին:
Առանձնապէս տիրական էր ան պատերազմէն
առաջ: Բայց երբ պատերազմը բռնկուեցաւ,
Ֆրանսացի սոցիալիստը, փոխանակ եղբայ-
րական ձեռք մեկնելու գերմանական սոցիա-
լիստին, խանդավառօրէն զէնք վերցուց, կե-
ցաւ Ֆրանսացի բուրժուայի կողքին եւ կատա-
ղիօրէն կոուեցաւ ոչ միայն գերման բուր-
ժուայի, այլեւ գերման բանուորի դէմ: Նոյնը
ըրաւ ե՛ւ գերման սոցիալիստը, ինչպէս նաեւ
բելժիքացի, անգլիացի, իտալացի եւ այլն
սոցիալիստները:

Այս պերճախօս փաստը հին ցնորքներու
քարոզիչները կ'ուզեն բացատրել անով, որ
դասակարգային գիտակցութիւնը իրբ թէ տը-